# ԹԵՄԱ 2 ԱՍԻԱ

## ԴԱՍ 2.15. Հնդկաստան (հինդի լեզվով՝ Բհարաթ)

. . .

*Նորզելանդացի 33-ամյա Էդմունդ Հիլարին և 39-ամյա Նորգեյը մայիսի 29-ին մեկնարկեցին 8500մ բարձրության վրա գտնվող ճամբարից և արդեն ժամը 11.30-ին նրանք գագաթին էին: Դա մարդկության «ապեղային ժամն» էր: Առաջինը լուսանկարել է Հիլարին, թե ինչպես է Նորդեյը ձյան մեջ շոկոլադ և քաղցրեղեն տեղավորում՝ որպես Ջոմոլունգմա աստվածուհուն արված զոհաբերություն: Շերպը գագաթին ամրացրեց 4 դրոշ՝ ՄԱԿ-ի, Նեպալի, Նոր Զելանդիայի և Մեծ Բրիտանիայի:*

*Տենցինգ Նորգեյը պարգևատրվել է Նեպալի բարձրագույն պարգևով՝ Նեպալի աստղով, իսկ Մեծ Բրիտանիայի կողմից՝ Գեորգ VI-I մեդալով:*

*1975 թ. մայիսի 16-ին Ջոմոլունգման նվաճեց առաջին կին լեռնագնացը՝ ճապոնուհի Յունկո (Ջյունկո) Տաբեյը:*

. . .

*Հնդկաստանի քաղաքացի, անգլիացի լեռնագնաց, գնդապետ Ջոն Խանտի արշավախմբի անդամ նորզելանդացի Էդմունդ Հիլարին ազգությամբ նեպալցի լեռնագնաց Տենցինգ Նորգեյի հետ 1953թ. մայիսի 29-ին առաջինն է բարձրացել աշխարհի ամենաբարձր լեռան՝ Ջոմոլունգմայի գագաթը՝ մոլորակի «երրորդ բևեռը»...:*

*Ջոմոլունգման անվանվում է նաև Էվերեստ՝ անգլիացի գեներալ, գեոդեզիստ, Հնդկաստանում անգլիական տեղագրական ծառայության ղեկավար Ջորջ Էվերեստի պատվին:*